ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2021 թվականի N 66-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Սյունիքի մարզպետի 2020 թվականի մարտի 30-ի «Դրամական օգնության համար ՀՀ Սյունիքի մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների ուսումնասիրման հանձնաժողովի գործունեության և դրամական օգնության հատկացման կարգի մասին» N 109-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

22.02.2021

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108680096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված
Սյունիքի մարզպետի 2021թ.-ի
մարտի 22-ի N 66-Ա որոշման
«Հավելված
Սյունիքի մարզպետի 2020թ.-ի
մարտի 30-ի N 109-Ա որոշման

ԿԱՐԳ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կարգով սահմանվում է.

1) Նյութական (դրամական) օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետարան (այսուհետ՝ մարզպետարան) դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեությունը:
2) Նյութական (դրամական) օգնության խնդրանքով մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների ուսումնասիրման կարգը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ

2. Հանձնաժողովի նպատակն է՝

1) Նյութական (դրամական) օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետարան դիմած քաղաքացիների ընտանիքների սոցիալական վիճակը բնութագրող անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, հանձնաժողովի նիստում դրանց քննարկման կազմակերպումը և մարզպետին համապատասխան առաջարկությունների ներկայացումը:
2) ՀՀ պետական բյուջեի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով Սյունիքի մարզպետարանին հատկացված միջոցների նպատակային և հասցեական բաշխումը և տրամադրումը դրամական օգնության խնդրանքով մարզպետարան դիմած կարիքավոր քաղաքացիներին:

2) ՀՀ պետական բյուջեի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով Սյունիքի մարզպետարանին հատկացված միջոցների նպատակային և հասցեական բաշխումը և տրամադրումը դրամական օգնության խնդրանքով մարզպետարան դիմած կարիքավոր քաղաքացիներին:

III. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

3.Դրամական օգնությունը տրամադրվում է մարզպետի որոշմամբ:
4.Դրամական օգնության չափը հանձնաժողովի առաջարկով հաստատում է մարզպետը:
5.Առանձին դեպքերում (քաղաքացիների ընդունելության ժամանակ կամ այլ չնախատեսված դեպքերում) քաղաքացիներին օգնություն տրամադրելու կամ մերժելու հարցը որոշում է մարզպետը՝ առանց հանձնաժողովի եզրակացության:
6.Հատկացված գումարները տրվում է անկանխիկ՝ դրամական օգնության համար դիմած քաղաքացու հաշվեհամարին փոխանցման եղանակով:
7.Դրամական օգնություն, որպես կանոն, կարող են ստանալ սույն կարգով սահմանված այն ընտանիքները, որոնց անդամները վերջին 12 ամիսների ընթացքում մարզպետարանից դրամական օգնություն չեն ստացել:
8.Տրամադրվող օգնության չափը և պարբերականությունը կարող է էապես տարբերվել կիրառվող նորմերից՝ Արցախում Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմում զոհված և վիրավոր զինծառայողների ընտանիքներին տրվող օգնության, ինչպես նաև սահմանամերձ բնակավայրերի բնակիչների գույքին և առողջությանը հասցված վնասի փոխհատուցման ժամանակ:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է մարզպետի որոշմամբ:
10. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:
11. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:
12. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:
13. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը:
14. Հանձնաժողովի նախագահին և քարտուղարին նշանակում է մարզպետը:
15. Հանձնաժողովի նախագահը՝
1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը,

3) մասնակցում է որոշումների կայացման գործընթացին,

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

16. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի որոշմամբ:

17. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,

2)մասնակցում է որոշումների կայացման գործընթացին,

3)ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին:

18. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի նիստերի կազմակերպումը,

2) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունների կազմումը:

19. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ»:

Գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան